ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«10» հուլիսի 2019 թ.
ժամը 11^{00} -ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)

նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ՝ Հ. Մելիքյան

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)

նախարարության քարտուղարության ընդհանուր թղթակցային և արձանագրային բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Ջուլհակյան

նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ՝ Ժ.Հարությունյան

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)

նախարարության հաշվապահական հաշվառման գլխավոր մասնագետ՝ Ա. Բաբուջյան

նախարարության անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ՝ Մ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի Համակարգող (ԳՊ/ՄՀմ)

նախարարության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Մանուչարյան

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի պլանային գինը, որը կազմում է 96 000 ՀՀ դրամ:

1. Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.

1.1 «ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2019թ. հուլիսի 2-ին armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով, ինչպես նաև gnumner.am պաշտոնական կայքում:

1.1 Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2019թ. հուլիսի 10-ը ժամը 11:00-ը:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գտնվելու վայրերի հասցեները և գնային առաջարկները.

«ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցեն	Ապրանքի անվանումը	ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /դրամ/	ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /դրամ/
1	ԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ ԱՁ	atsgnumner@gmail.com	բլանկներ	91 200	91 200
2	«ՄԻՍՄԱ» ՍՊԸ	Ք. Երևան, Հանրապետության փող., 49 շենք, նկուղային տարածք 7/1	բլանկներ	240 000	240 000
3	«ԱԿՏԻՍ» ՍՊԸ	Ք. Երևան, Արզումանյան փող. 4/1	բլանկներ	57 600	57 600
4	«Քոփի Փրինթ» ՍՊԸ	1copyprint@mail.ru	բլանկներ	76 800	92 160

3. Տվյալներ՝ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Բոլոր մասնակիցների ներկայացված հայտերը համապատասխանել են սահմանված կարգի պահանջներին:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմանների համապատասխանության մասին.

4.1 «ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով բոլոր մասնակիցների կողմից ներկայացվել են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Հանձնաժողովը որոշեց՝

ա) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ հանձնաժողովը որոշեց առաջին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱԿՏԻՍ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ին.

բ)Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ.

գ) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ ծանուցել «ԱԿՏԻՍ» ՍՊԸ-ին 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը.

դ) Հանձնաժողովի հաջորդ՝ գնահատման արդյունքների ամփոփման նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից դրական եզրակացությունը ստանալուց և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները՝

Հանձնաժողովի		
Նախագահ՝		**Հ. Մելիքյան**
անդամներ՝		**Ժ.Հարությունյան**
		Ա. Ջուլհակյան
		Ա. Բաբուջյան
		Մ. Հարությունյան
քարտուղար՝		**Ա. Մանուչարյան**